

ՅԱՅՑՆՈՒԹԵԱՆ ԴՐԳԻՑ

(Ե. Կ. Բ. Ա. Ռ.-ի բանաստեղծութիւններից)

Ահաւասիկ կամ ես առ զուրս և բաղխեմ.
Եթէ ոք լուիցէ ձալնի իմում և բանալցէ
զդրունան, մալց առ նա և ընթրիս արարից
առ նա, և նա ընդ իս։ Գլ. Գ. 20.

Կանգնած եմ ահա և դուռը բաղխում,
Եւ քո տան միջին ապաստան խնդրում.
Մերկ եմ, ուժասպառ, աղքատ և անզօր,
ծամբաս գժուարին, փշոտ, հեռաւոր։
Թափառում եմ Ես արար աշխարհում,
Շատերի դուռը ծեծում ու բաղխում.
Ով ձայնս լսի, դուռը բաց անի,
Տայ ինձ ապաստան, իր մօտ ընդունի —
Կը մտնեմ Ես ներս, կը սիրեմ նորան,
Կ'ընթրեմ նորա հետ ընկերիս նման։
Գործից ու կռուից յոգնած ես, անզօր —
Քեզ կը զօրացնեմ, ոյժ կը տամ Ես նոր.
Թէ լալիս ես դու՝ տիտուր, վշտահար —
Կը սրբեմ վերջին արցունքդ իսպառ.
Եւ ամոքելով վշտերդ լաւէտ,
Կը նստեմ կողքիդ ընթրելու քեզ հետ...
Կանգնած եմ ահա և դուռդ բաղխում,
Եւ քո տան միջին ապաստան խնդրում։

ՅԱՅՑՆՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆՆԱՆՑ